ՄԵԾԱՐՄԱՆ ԵՐԵԿՈ

Լրացավ ականավոր հայագետ, Հայկական ՍՍՌ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Կարապետ Մելիք-Օհանջանյանի ծննդյան 70 և գիտական գործունեության 50-ամյակը։ Այդ առթիվ Մաշտոցի անվան Մատենադարանի նիստերի դահլիճում 1963 թ. մարտի 12-ին տեղի ունեցավ մեծարման երեկո, որին մասնակցեցին Երևանի գիտական հասարակայնության բազմաթիվ ներկայացուցիչներ։ Մատենադարանի դիրեկտոր Լ. Խաչիկյանի բացման խոսքից հետո պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանի կյանքի և գիտական գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ բանասեր Ա. Ղանալանյանը։ Հանգամանորեն վերլուծելով Կ. Մելիք-Օհանջանյանի բազմամյա ու բեղմնավոր մանկավարժական-հասարակական, գիտա-վարչական ու գիտա-ստեղծագործական կյանքի տարեգրությունը, զեկուցողը առանձնապես նշեց նրա մեծ ծառայությունները հայ ժողովրդական էպոսի՝ «Սասունցի Դավթի» տարբերակների հայտնագործման, էպոսի համահավաք բնագրի մշակման ու տպագրության շնորհակալ գործում։ Պրոֆ. Մելիք-Օհանջանյանի բանագիտական, աղբյուրագիտական ու գրականագիտական բազմաթիվ աշխատությունները, մանավորապես «Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահ-Նամեում» ու հայ մատենագրության մեջ» (1934), «Լենինը ֆոլկլորի մեջ» (1936), «Մհեր-Միհրը Սասնա ծռերի մեջ» (1946), «Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավստոս Բուզանդի» (1947), Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմության» քննական-համեմատական բնագիրը (1961) և այլն, կարևոր ներդրում են հայագիտության մեջ։

Հատկապես մեծ է նրա վաստակը Սովետական Հայաստանի հայագիտական մի շարք հիմնարկությունների ստեղծման ու ղեկավարության, գիտական կադրերի պատրաստման գործում.

Պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանին ծննդյան 70 և գիտական գործունեության 50-ամյակի առթիվ ջերմորեն ողջունեցին Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանը (Հայկ. ՍՍՌ ԳԱ հասարակագիտական բաժանմունքի կողմից), պրոֆ. Ե. Տեր-Մինասյանը (լեզվի ինստիտուտ), գիտության վաստակավոր գործիչ Խ. Սարգսյանը (Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ), Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ս. Երեմյանը (պատմության ինստիտուտ), արվեստագիտության դոկտոր Ռ. Զարյանը (արվեստի ինստիտուտ), Է. Պիվազյանը (Պետական համալսարան), Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Մ. Հասրաթյանը (Խ. Աբովյանի անվ. մանկավարժական ինստիտուտ), Ա. Նազինյանը (հնագիտության և ազգագրության ինստիտուտ), Հ. Ինճիկյանը (արևելագիտության սեկտոր), Հաջիե Ջնդին (արևելագիտության սեկտորի քրդագիտական խումբ և Գրողների միության քրդական սեկցիա), Վ. Նորենցը (Գրողների միություն), Վ. Դավթյանը («Գրական թերթ» և «Սովետական գրականություն»), Գ. Ստեփանյանը (գրականության և արվեստի թանգարան), Ն. Ակոպյանը (պատմության թանգարան), Գ. Աբգարյանը (Մատենադարան), Ս. Լալաֆարյանը (Մատենադարանի բնագրագիտական սեկտոր), պրոֆ. Ռ. Հովհաննիսյանը (հոբելյարի աշակերտների կողմից)։ Վերջում շնորհակալական խոսքով հանդես եկավ հոբելյարը։

Վ. Գ.

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Փարիզից մեզ հայտնում են, որ 1963 թ. վերսկսվելու է „Revue des Études Arméniennes" հայագիտական հանդեսի հրատարակությունը (հանդեսը հիմնադրվել էր Ա. Մեյեի և Ֆ. Մակլերի կողմից 1920 թ. և տպագրվում էր մինչև 1933 թ.)։ Պարբերականի խմբագրական կոլեգիայի մեջ մտնում են հայտնի հայագետներ Է. Բենվենիստը, Կ. Կաենը, Մ. Կանարը, Ժ. Դյումեզիլը, Ա. Դյուպոն-Սոմմերը, Ֆ. Ֆեյդին, Ա. Գրաբարը, Պ. Լեմերլը, [illegible], Ա. Միրամբելը և Լ. Ռենուն։ Գլխավոր խմբագիրն է Է. Բենվենիստը, խմբագրության քարտուղարը՝ Հայկ Բերբերյանը։

Հանդեսում լուսաբանվելու են լեզվաբանության, բանասիրության, պատմության, հնագիտության, [illegible] և էթնոգրաֆիայի պրոբլեմները, ինչպես նաև հայ ժողովրդի կուլտուրական կապերը հարևան ժողովուրդների հետ։ Հատուկ տեղ է հատկացվելու Սովետական Հայաստանում հայագիտության գծով լույս տեսած այն աշխատություններին, որոնք անծանոթ են մնացել արևմուտքի գիտնականներին։

Ենթադրվում է, որ նոր պարբերականի առաջին համարը լույս կտեսնի այս տարվա աշնանը։